ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 հունվարի 2021 թվականի թիվ 1- Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ և 25-րդ հոդվածի 1-ին մասերով ու «Այլընտրանքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» թիվ 2136-Ն որոշման պահանջների՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումների ղեկավարներին.

1) 2020 թվականի ձմեռային զորակոչն անցկացնել սահմանված կարգով 2021 թվականի հունվարից մինչև 2021 թվականի մարտի 31-ը ներառյալ հաստատված գրաֆիկով՝ ապահովելով նախատեսված թվաքանակը,

2) ժամկետային զինվորական ծառայության զորակոչից խուսափող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վերաբերյալ նյութերը սահմանված կարգով տրամադրել Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին:

2. Առաջարկել ՀՀ Լոռու կայազորի զինվորական դատախազությանը.

1) քննության առնել ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումների կողմից

տրված տարկետումների, զինվորական հաշվառումից և գրանցումից դուրս գրվելու և արտոնություններ տրամադրելու օրինականությունը,

2) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել զորակոչից խուսափողների նկատմամբ և իրավասու պետական մարմինների միջոցով հայտարարել հետախուզում:

3. ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչությանը.

1) ապահովել զինակոչիկների անվտանգ տեղափոխումը և հասարակական կարգի պահպանումը զորակոչային տեղամասում,

2) ապահովել մարզի տարածքում և մարզի տարածքից դուրս գտնվող զորակոչիկների որոնումները և նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամաս,

3) զորակոչի ընթացքում զորակոչիկներին փոխադրող ավտոբուսներին ուղեկցելու համար զորակոչային տեղամասին կցել ճանապարհային ոստիկանության անձնակազմեր:

4. ՀՀ Տավուշի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը.

1) երկշաբաթյա ժամկետում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումների հետ միասին համալրել հանձնաժողովները բժիշկ մասնագետներով՝ նախապատրաստելով պահեստային բժիշկներ և անհատական կազմը ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության հաստատմանը,

2) ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումների հայտով զինակոչիկների ֆլյուորո /ռենտգեն/ զննում, սոնոգրաֆիկ հետազոտում և կանխարգելիչ պատվաստումներ կատարելու նպատակով հանձնարարել մարզի առողջապահական համակարգի բուժկանխարգելիչ հաստատություններին՝ ապահովել անհրաժեշտ քանակով պատվաստանյութեր, ֆլյուորո /ռենտգեն/ ժապավեններ և երևակման նյութեր, ինչպես նաև իրականացնել նոր կորոնավիրուսի (COVID-19) տարածման և զինված ուժեր ներթափանցման դեպքերի կանխարգելման անհրաժեշտ միջոցառումներ:

5. Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների /անկախ կազմակերպական և իրավական ձևերից/ ղեկավարներին.

1) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակներն ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին,

2) իրավասության սահմաններում ապահովել Հայաստանի Հանրապետության զորակոչային տարիքի քաղաքացիների ներկայանալը ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի N1 և N2 տարածքային ստորաբաժանումներ:

6. Մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ ողջ զորակոչի ընթացքում ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը տեղական և հանրապետական ԶԼՄ-ների միջոցով:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել ինձ:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

X

2021թ. հունվարի 08
Ք. Իջևան

Հաստատված է
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 24-ի N 2136-Ն որոշմամբ

ԿԱԶՄ
ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ.Զոբանյան - ՀՀ Տավուշի մարզպետ, հանձնաժողովի նախագահ

Ս.Ավետիսյան - ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետ

Ս.Հովհաննիսյան - ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Իջևանի ռազմական ոստիկանության բաժնի պետ

Մ. Սահակյան - ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության Բերդի ռազմական ոստիկանության բաժնի պետ

Կ.Հարությունյան - ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի N1 տարածքային ստորաբաժանման ղեկավար

Լ.Բաբայան - ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի N2 տարածքային ստորաբաժանման ղեկավար

Գ.Մատինյան - Զորակոչային հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ